



# ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԱՐՏԱՇԱՏԻ ՇՐՋԱՆԻ ԿՈԼԽՈՋՆԻԿՆԵՐԻ ԵՎ ԿՈԼԽՈՋՆԻԿՈՒՅԻՆԵՐԻ ԳԻՍՈՒՍԸ  
ՀԱՅՎԱԿԱՆ ՍՍՌԻ ԲՈԼՈՐ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ

ԸՆԿԻՐՆԵՐ:



Ատտերազմի ահեղ օրերին, երբ մեր Հայրենիքի գլխին կախվեց մահացու վտանգ և հերոսական սովետական ժողովուրդը իր հանձարեղ առաջնորդ և զորավար մեծ Ստալինի ղեկավարությամբ հաղթական պատերազմ էր մղում դերմանա-Ֆաշիստական զավթիչների դեմ, ամբողջ աշխարհում ցրված արտասահմանյան հայերը նույնպես պայքարի ելան մեր բնդհանուր թշնամու դեմ:

Օտար երկրի տակ ծանր ու անուրախ կյանքում նրանց ողևորում էր այն գիտակցությունը, որ կա Սովետական մեծ Միությունը, որտեղ ծաղկում է մեր հարազատ երկիրը՝ Սովետական Հայաստանը:

Պատերազմի հենց առաջին օրվանից արտասահմանյան հայերը պայքարի ելան արյունարբու Ֆաշիզմի դեմ: Հազարավոր հայեր մտան մեր դաշնակիցների բանակներն ու պարսիզանական ջոկատները և զենքը ձեռքներին մարտնչում էին ատելի թշնամու դեմ:

Նրանք կազմակերպեցին առաջադիմական ընկերություններ և միջոցներ հավաքեցին «Սասունցի Դավիթ» տանկային շարասյուն կառուցելու համար, ստեղծեցին գեներալ Բաղրամյանի անվան տանկային շարասյան հատուկ ֆոնդ:

Սկսվ խաղաղությունը: Սովետական ժողովուրդը իր մեծ առաջնորդ և հանձարեղ զորավար ընկեր Ստալինի ղեկավարությամբ հաղթականորեն ավարտելով Հայրենական մեծ պատերազմը, անցավ խաղաղ ստեղծարար աշխատանքի:

Վերջերս ավարտված ՍՍՌԻ Գերագույն

Սովետի սեսիան հաստատեց ՍՍՌԻ ժողովրդական տնտեսության վերականգնման և զարգացման վիթխարի պլանը՝ ստալինյան 4-րդ հնգամյակի պլանը:

Հնգամյա նոր պլանի կենսագործմամբ ոչ միայն վերականգնվում է պատերազմի տարիներին զերմանական զավթիչների կողմից ավերված ժողովրդական տնտեսությունը, այլ և զգալիորեն կգերազանցվի արտադրության նախապատերազմյան մակարդակը, դրանով լակ է՛լ ավելի կբարձրանա ՍՍՌԻ ժողովուրդների բարեկեցությունը:

Ինչպես պատերազմի տարիներին, այնպես և այժմ օտար երկրներում ապրող մեր հայ եղբայրների ու քույրերի հայացքն ուղղված է դեպի իրենց հայրենիքը՝ Սովետական Հայաստանը, Սովետական մեծ Միությունը, որտեղ միայն նրանք կարող են փրկություն գտնել բազմամյա թափառումներից, որտեղ միայն նրանց համար կարող է ապահովվել խաղաղ ստեղծագործ աշխատանք և բերի-րալի էլյանք:

Հենց այդ պատճառով էլ արտասահմանյան հայերը այժմ աշխարհի բոլոր ծայրերից դիմել են Սովետական Կառավարությանը, խնդրելով թույլ տալ իրենց վերադառնալ հայրենիք՝ Սովետական Հայաստան: Մեր հարազատ Սովետական Կառավարությունը, մեր իմաստուն առաջնորդ ընկեր Ստալինը բավարարեցին մեր արտասահմանյան եղբայրների ու քույրերի խնդիրը:

ՍՍՌ Միության ժողովրդավարական հատուկ որոշում ընդունեց, որով թույլատրեց արտասահմանյան հայերին արտասահմանից վերադառնալ Սովետական Հայաստան:

Այդ որոշումը հանդիսացավ բոլշևիկյան պարտիայի, սովետական կառավարության և անձամբ ընկեր Ստալինի հոգատարության նոր արտահայտությունը հայ ժողովրդի նկատմամբ:

Այդ պատմական որոշումը ընդունվեց հակայական ոգևորությամբ և երախտագիտությամբ ինչպես Սովետական Հայաստանի աշխատավորների, այնպես և արտասահմանում ապրող հայերի կողմից:

Սովետական կառավարությունը խոշոր միջոցներ է բաց թողել հայրենիք վերադարձող հայերին տեղավորելու համար:

Մենք՝ Արտաշատի շրջանի աշխատավորներս, որոշեցինք սովետական կառավարության միջոցառումներին միացնել մեր ջանքերը արտասահմանից վերադարձող մեր եղբայրների ու քույրերի ընդունելությունը և տեղավորումը հաջողությամբ կազմակերպելու համար:

Մենք որոշել ենք ստեղծել արտասահմանից վերադարձող հայերի տեղավորմանը օգնելու ֆոնդ, այդ նպատակով միանվագ տալով բանվորների ու ծառայողների 4—5 օրվա աշխատավարձը և յուրաքանչյուր աշխատունակ կոլխոզնիկի խնայողությունից որոշ գումար:

Դիմումն ստորագրել են՝ Ն. Դվին գյուղի «Շինհար» կոլխոզի նախագահ՝ ԽԱԶԱՏՈՒՐ ՆԱԶԱՐՅԱՆԸ, Գետաշեն գյուղի կոլխոզի նախագահ՝ ԱՐՇԱԿ ՇԱՀԿԵՆԻՅԱՆԸ, Վ. Արտաշատ գյուղի Սվերդլովի անվան կոլխոզի կոլխոզնիկուհի՝ ՍԱԹԵՆԻԿ ԲԱՂԴՈՅԱՆԸ, Դարդալու գյուղի Փառիգյան կոմունեայի անվան կոլխոզի կոլխոզնիկուհի՝ ՊԱՅՄԱՌ ՀՈՎՀԱՆԵՒՍՅԱՆԸ, Արեշատ գյուղի Միկայանի անվան կոլխոզի նախագահ՝ ԳԱՐԵԳԻՆ ԳԱՍՏՅԱՆԸ, Ազատական գյուղի Ստալինի անվան կոլխոզի կոլխոզնիկ՝ ՀԱՌՈՒԹՅՈՒՆ ՀԱԽՎԵՐԳՅԱՆԸ, Հայաստանի Կ(բ)Պ Արտաշատի շրջկոմի ֆարտուղար՝ ՀՄԱՅԱԿ ՄԱՐՏԻՐՈՅԱՆԸ, Հայկական ՍՍՌ վաստակավոր արտիստ՝ ԴԱՆԻԵԼ ՄԻԼԻՏՈՆՅԱՆԸ, վաստակավոր ուսուցչուհի՝ ՎԵՐԳԻՆԵ ՀՈՎՍԵՓՅԱՆԸ և ուրիշները:

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՋԵՐՄ ԶԳԱՑՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԵՎ ԲՈՒՌՆ ԽԱՆԴԱՎԱՌՈՒԹՅԱՄԲ Է ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ ԱՐՏԱՇԱՏՅԻՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԻՆ

Երեկ Երևանի գործարաններում ու ֆաբրիկաներում, գիտական և ուսումնական հաստատություններում, հիմնարկություններում ու ձեռնարկություններում, ինչպես նաև ռեսպուբլիկայի շրջկենտրոններում ու գյուղերում տեղի ունեցան աշխատավորների բազմամարդ ժողովներ, որոնք քննության առան Արտաշատի շրջանի կոլխոզնիկների ու կոլխոզնիկուհիների դիմումը՝ արտասահմանից վերադարձող հայերի տեղա-

Մեր որոշումը իրագործելու համար մենք առկեն հավաքել ենք ավելի քան 1 միլիոն ռուբլի, շրջանի 44 գյուղերում և շրջանային կենտրոնում առանձնացրել ենք 569 սենյակ, վերադարձող հայերին տեղավորելու համար, սկսել ենք 186 նոր բնակարանների շինարարությունը:

Մենք՝ արտաշատցիներս կոչ ենք անում մեր ռեսպուբլիկայի բոլոր աշխատավորներին, բանվորներին, ծառայողներին, կոլխոզնիկներին, ինտելիգենցիային, հետևել մեր օրինակին, իրենց խնայողություններից առանձնացնել միջոցներ և պատրաստել բնակարաններ՝ հայրենիք վերադարձող հայերին օգնելու և տեղավորելու համար:

Մենք հավատացած ենք, որ մեր ռեսպուբլիկայի ոչ մի աշխատավոր հեռու չի մնա այդ հայրենասիրական մեծ գործից:

Բարի գալուստ, մեր հարազատներ! Կեցցե՛ մեր մեծ հայրենիքը: Կեցցե՛ մեր փառապանծ սովետական կառավարությունը:

Կեցցե՛ Լենինի-Ստալինի մեծ պարտիան: Թող երկար ու երկար տարիներ ապրի մեր բոլոր հաղթանակների ստեղծող, սովետական ժողովուրդների հարազատ հայր, մեր իմաստուն առաջնորդ մեծ Ստալինը:

վորմանը օգնելու ֆոնդ ստեղծելու մասին: Ջերմորեն պաշտպանելով արտաշատցիների նախաձեռնությունը, ռեսպուբլիկայի բանվորներն ու կոլխոզնիկները, գիտության և արվեստի աշխատողները, սովետական ծառայողները իրենց խնայողություններից հատկացումներ են կատարում արտասահմանից վերադարձող հայերի տեղավորմանը օգնելու ֆոնդ ստեղծելու համար:

ԵՐԵՎԱՆՈՒՄ

Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական համալսարանի պրոֆեսոր-դասախոսական կազմը և ուսանողութունը հայրենասիրական բուռն խանդավառությամբ ընդունեցին Արտաշատի շրջանի կոլխոզնիկներին և կոլխոզնիկուհիներին դիմումը:

Համալսարանի ռեկտոր ակադեմիկոս ընկ. Հ. Բունիաթյանը պրոֆեսոր-դասախոսների և ուսանողության ժողովում հանդես գալով ասաց.

— Արտասահմանյան հայերի ներգաղթը կազմակերպելու մասին սովետական կառավարության պատմական որոշումը արտահայտում է արտասահմանի հարյուր հազարավոր հայ աշխատավորության և ամբողջ հայ ժողովրդի նվիրական իղձը: Մեր հայ եղբայրները և քույրերը ցանկանում են մեզ հետ միասին ապրել իրենց հայրենիքում՝ Սովետական Հայաստանում: Հայրենական պատերազմի տարիներին և այժմ դեպի Սովետական Միությունն ունեցած հայրենադարձության իրենց բուռն տենչանքով արտասահմանի հայերը ցույց տվեցին, որ նրանք իրենց բախտը կապել են միայն և միայն Սովետական Միության հետ:

Մենք պետք է ողջունենք արտաշատցիների հիանալի նախաձեռնությունը և շնորհներ մեր միջոցները՝ մեր արյունակիցների ներգաղթը հաջող կազմակերպելու համար:

Այնուհետև ելույթներ ունեցան պրոֆ Ա. Հովհաննիսյանը, Հայրենական պատերազմի մասնակիցներ՝ ասպիրանտ Գ. Թումանյանը, ուսանողներ Ա. Մադաթյանը, Պ. Ղազարյանը և ուրիշները:

Ժողովի մասնակիցները միաձայն որոշեցին իրենց հինգ օրվա աշխատավորները տրամադրել ներգաղթող հայերի տեղավորմանը օգնելու ֆոնդ ստեղծելու համար:



Կիրովի անվան գործարանում արտաշատցիների դիմումի քննությանը նվիրված ժողովները վերածվեցին սովետական կառավարության և հարազատ Ստալինի նկատմամբ անհուն սիրո և երախտագիտության վառ ցույցերի:

Արտաշատցիների առաջարկությունները արժանացան բանվորության և ինժեներատեխնիկական անձնակազմի միահամուռ հավանության:

— Արտաշատցիների դիմումը մեզ հիշեցնում է, — ասում է ընկեր Հ. Տոնոյանը, — որ սովետական կառավարության պատմական որոշումը անշեղորհն կենսագործելու՝

հայրենիք վերադարձող հայերին կազմ ու պատրաստ դիմավորելու գործում մեծ անելիքներ ունեն Հայաստանի բոլոր աշխատավորները: Մենք պատրաստ ենք մեր համեստ միջոցները միացնելու կառավարության հակադասական հատկացումներին և գրկաբաց ընդունելու մեր եղբայրներին ու քույրերին:

Ժողովներում ելույթներ ունեցան նաև գործարանի անվանի մարդիկ: Նրանք բոլորն էլ ողջունելով արտաշատցիների հայրենասիրական նախաձեռնության կարևոր նշանակությունը, առաջարկում էին հինգ օրվա աշխատավորներ հատկացնել արտասահմանից վերադարձող հայերի տեղավորմանը օգնելու ֆոնդ ստեղծելու համար:

Կիրովցիները միաձայն ընդունում են այդ առաջարկը: Մի քանի ժամում գործարանի բանվոր-ծառայողները այդ նպատակի համար հատկացրին 150 հազար ռուբլի:



Աշխատանքից անմիջապես հետո Չեխ-Օճառ կոմբինատի բանվոր-ծառայողները ժողովի հավաքվեցին և քննության առան Արտաշատի շրջանի կոլխոզնիկների և կոլխոզնիկուհիների դիմումը:

Ժողովում ելույթ ունեցան կոմբինատի դիրեկտոր ընկ. Ա. Խաչատրյանը, առաջավոր բանվորներ Ա. Կարակերտյանը, Ե. Կարպետյանը, Հ. Սարոյանը և ուրիշները:

Նշելով սովետական կառավարության կողմից հայ ժողովրդի նկատմամբ ցուցաբերվող բացառիկ հոգատարությունը, իրանք ջերմորեն պաշտպանեցին արտաշատցիներին նախաձեռնությունը:

Կոմբինատի բանվոր-ծառայողները միաձայն որոշեցին իրենց հինգ օրվա աշխատավորներ հատկացնել արտասահմանից վերադարձող հայերի տեղավորմանը օգնելու ֆոնդին:



Երևանի Ստալինյան ուսյունի բանվոր-ծառայողների միայն 12 կոլեկտիվներ ֆոնդին հատկացրին 630.000 ռուբլի:



Հալիական ՍՍԻ Գիտությունների Ակադեմիայի Երկրագործության ինստիտուտի կոլեկտիվի ժողովը, որը քննության առավ արտաշատցիների դիմումը, վերածվեց հայրենասիրական ջերմ ցույցի: Ժողովում ելույթ ունեցան Հալիական ՍՍԻ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ, Երկրագործության ինստիտուտի դիրեկտոր ընկ. Մ. Թումանյանը, ընկ. ընկ. Գ. Բարաջանյանը, Լ. Կարապետյանը և ուրիշները, որոնք

միահամուռ կերպով պաշտպանեցին արտաշատցիների հայրենասիրական դիմումը:

Կնատրուտի կուլեկտիվի ընդհանուր ժողովը որոշեց արտասահմանից վերադարձող հայերի տեղավորմանն օգնելու ֆոնդին հատկացնել 4—5 օրվա աշխատավարձ: Մոտ մեկ ժամվա ընթացքում հատկացումների դումարը հասավ 18 հազար ութբլու:

\*\*\*

Գյուղգործիքների գործարանում արտաշատցիների դիմումի կապակցությամբ հրավիրված բազմամարդ ժողովում հայրենասիրական ջերմ ելույթներ ունեցան ինժեներներ Գ. Դմիտրևը, Բ. Չուլյանը, փակահագործ Ա. Սալչենկոն, խառատ Ա. Օհանյանը և ուրիշները: Նրանք բոլորն էլ, պաշտպանելով արտաշատցիների նախաձեռնությունը, գործարանի բանվորներին կոչ էին անում ակտիվորեն մասնակցել արտասահմանից վերադարձող հայերի տեղավորմանը օգնելու ֆոնդի ստեղծմանը:

Ժողովը միաձայն որոշեց այդ նպատակի համար հատկացնել 5 օրվա աշխատավարձ:

\*\*\*

Ալրաղայց Կոմբինատի բանվոր-ծառայողներն իրենց ընդհանուր ժողովում ջերմորեն պաշտպանեցին Արտաշատի շրջանի կոլխոզնիկների դիմումը արտասահմանից վերադարձող հայերի տեղավորմանը օգնելու ֆոնդ ստեղծելու մասին: Ժողովի մասնակիցները որոշեցին այդ նպատակի համար հատկացնել իրենց 5 օրվա աշխատավարձը: Հենց նույն օրը բանվոր-ծառայողները հատկացրին 25.600 ութբլու:

\*\*\*

Միախոտի գործարանի բանվոր-ծառայողները ոգևորությամբ արձագանքեցին արտաշատցիների հայրենասիրական կոչին: Ժողովում ելույթ ունեցող ընկերները խոստանում էին, որ իրենք, բացի իրենց խնայողություններից հատկացումներ կատարելը, ամեն կերպ կօգնեն արտասահմանից վերադարձող հայերի տեղավորումը հաջող կազմակերպելու գործին:

Ժողովը միաձայն որոշեց այդ ֆոնդի օգտին հատկացնել 5 օրվա աշխատավարձ:

\*\*\*

Կարի առաջին գործարանի բանվոր-ծառայողների ժողովում, որը նվիրված էր արտաշատցիների դիմումի քննությանը, 70-ամյա րանվոր Թ. Ստեփանյանը սասց.

— Ես նույնպես երկար տարիներ եղել եմ օտարություն մեջ, զգացել եմ պանդխտու-

թյան դանդաղությունը, տոչորվել հայրենիք վերադառնալու ցանկություն: Ինձ հայրենիք վերադարձրեց սովետական կառավարությունը: Եվ ես այժմ վախում եմ ին հայրենիքի քաղցրությունները: Մենք ամեն կանոնը նրանց ընդունումն ու տեղավորումը լավ կազմակերպելու համար: Բարի դառնալու մեր հարազատներին:

Գործարանի բանվոր-ծառայողների կուլեկտիվի ընդհանուր ժողովը միաձայն որոշեց արտասահմանից վերադարձող հայերի տեղավորմանը օգնելու ֆոնդին հատկացնել 5 օրվա աշխատավարձ: Մի քանի ժամվա ընթացքում այդ դումարը հասավ 20 հազար ութբլու:

\*\*\*

Արտաշատցիների կոչն ստանալուն պես «Արարատ» տրեստի և գերծարանի բանվորներն ու ծառայողները հավաքվեցին միտինգի:

Արտաշատցիների նախաձեռնությունը մեծ խանդավառություն առաջ բերեց աշխատավորների մեջ: Նրանք իրենց ելույթներում ողջունում էին այդ նախաձեռնությունը և արտանց իրենց լուծման էին մուծում այդ մեծ գործի օգտին:

Մեծ ոգևորությամբ կուլեկտիվը որոշեց 5 օրվա աշխատավարձը հատկացնել հայրենիք վերադարձող հայերի օգտին:

\*\*\*

Մուլիտի գործարանի բանվոր-ծառայողները քննության առան արտաշատցիների դիմումը: Գործարանի կուլեկտիվի բազմամարդ ժողովում ելույթ ունեցողները կոչ էին անում ամեն կերպ օգնել մեր հարազատների տեղավորումը հաջող կազմակերպելու գործին: Ժողովը որոշեց այդ նպատակի համար հատկացնել 5 օրվա աշխատավարձը:

\*\*\*

Ալյումինշինի կառուցողները մեծ սիրով ընդունեցին արտաշատցիների հայրենասիրական դիմումը: Ժողովում ելույթ ունեցող ընկերները միահամուռ կերպով պատրաստակամություն էին հայտնում ամեն կերպ օժանդակել արտասահմանից վերադարձող հայերին հաջող տեղավորելու գործին:

Ժողովը որոշեց այդ նպատակին հատկացնել 5 օրվա աշխատավարձը:

\*\*\*

Գ. Սունդուկյանի անվան Պետական թատրոնի արվեստագետներն ու բանվոր-ծառայողներն իրենց ժողովում խանդավառությամբ քննության առան արտաշատցիների դիմումը:

ժողովում ելույթ ունեցողները պաշտպանելով արտաշատցիների նախաձեռնությունը, կոչ արեցին կոլեկտիվի անդամներին ոչինչ չխնայել արտասահմանից վերադարձող մեր հարազատների տեղավորման գործին օգնելու համար: Դերասան Ա. Կոթիկյանը առաջարկեց մեկ ներկայացում տալ և ստացված գումարը ամբողջովին հատկացնել այդ նպատակին: Կոլեկտիվը որոշեց նաև վերադարձող հայերի տեղավորման ֆոնդի օգտին հատկացնել 5 օրվա աշխատավարձ:



Հացի տրեստի բանվոր-ծառայողների բազմամարդ ժողովում քննութայն առնվեց Հայաստանի աշխատավորութայն ուղղված արտաշատցիների դիմումը: Ելույթներից հետո տրեստի կոլեկտիվը որոշում ընդունեց այդ նպատակի համար հատկացնել 5 օրվա աշխատավարձ:



Միահամուռ կերպով հավանություն տալով արտաշատցիների դիմումին, Երևանի Կոնսերվի գործարանի բանվոր-ծառայողներն իրենց ժողովում որոշում ընդունեցին արտասահմանից վերադարձող հայերի տեղավորման օգնելու ֆոնդին հատկացնել իրենց 5 օրվա աշխատավարձը:

**ԼՆԻՆԱԿԱՆՈՒՄ**

Արտաշատցիների հայրենասիրական դիմումը ջերմ արձագանք գտավ Լենինականի գործարաններում ու ֆաբրիկաներում, երկաթուղային հանգույցներում և հիմնարկ-ձեռնարկություններում:

Երկաթուղային հանգույցում տեղի ունեցավ բազմամարդ ժողով, որտեղ քննութայն առնվեց արտաշատցիների դիմումը: Երկաթուղայինները հայրենիք վերադարձող արտասահմանյան հայերին ընդունելու և տեղավորելու համար հատկացրին իրենց 5 օրվա աշխատավարձը, որը կազմեց 205 հազար ռուբլի:

Բազմամարդ ժողովներ տեղի ունեցան նաև Տեքստիլ կոմբինատի գործարաններում: Արձագանքելով արտաշատցիների դիմումին, կոմբինատի բանվոր-ծառայողները և ինժեներ-տեխնիկական աշխատողները հատկացրին իրենց 4—5 օրվա աշխատավարձը, որը կազմեց 191 հազար ռուբլի:

Մսի կոմբինատի բանվոր-ծառայողները հատկացրին 22 հազար ռուբլի, Կարի գործարանի կոլեկտիվը՝ 23 հազար ռուբլի, Լենգէսի աշխատողները՝ 8 հազար ռուբլի:

Լենինականի աշխատավորները հենց առա-

ջին օրը այդ նպատակին հատկացրին մեկ միլիոն 22 հազար ռուբլի:

**ՄՏԵՓԱՆԱՎԱՆՈՒՄ**

Ստեփանավանի շրջանի աշխատավորութայն ահտիվորեն արձագանքեց արտաշատցիների դիմումին: Շրջկենտրոնի հիմնարկ-ձեռնարկություններում և կոլտոգներում տեղի ունեցան աշխատավորների մասնակցական ժողովներ, որոնք վերածվեցին հայրենասիրական բուռն ցույցերի:

Արտաշատցիների դիմումի քննութայն առաջին օրը քաղաքի բանվոր-ծառայողները հատկացրին 150 հազար ռուբլի, կոլտոգային աշխատավորութայնը՝ կես միլիոն ռուբլի:

**ՀՈԿՏՄԲԵՐՑԱՆՈՒՄ**

Շրջանի աշխատավորները ջերմորեն պաշտպանեցին արտաշատցիների դիմումը: Մինչև ապրիլի 7-ը շրջանի աշխատավորները այդ նպատակի համար հատկացրել են 850 հազար ռուբլի:

**ՄԻԿՈՑԱՆՈՒՄ**

Շրջկենտրոնում և բոլոր գյուղերում տեղի ունեցան աշխատավորների ժողովներ, որոնք քննութայն առան արտաշատցիների դիմումը: Իրենց ժողովներում բանվոր-ծառայողները որոշեցին արտասահմանից վերադարձող հայերի տեղավորմանը օգնելու ֆոնդին հատկացնել իրենց 5 օրվա աշխատավարձը: Հենց միայն ապրիլի 5-ին շրջանի աշխատավորութայն այդ նպատակի համար հատկացրեց 150 հազար ռուբլի:

**ԿՈՏԱՅՔՈՒՄ**

Շրջանի բանվոր-ծառայողները և կոլտոգները իրենց ժողովներում միահամուռ կերպով պաշտպանեցին արտաշատցիների դիմումը: Հենց առաջին օրը շրջանի աշխատավորները այդ նպատակի համար հատկացրին 350 հազար ռուբլի: Շրջանի մի շարք գյուղերում և շրջկենտրոնում տասնյակ բնակարաններ են հատկացված արտասահմանից վերադարձող հայերին տեղավորելու համար: Շրջանի աշխատավորները իրենց ժողովներում խոստանում էին ամեն բան անել արտասահմանից վերադարձող հարազատներին լավ ընդունելու և նրանց կարիքները հոգալու համար:

**ԴԻԷԻՋԱՆՈՒՄ**

Արտաշատցիների կողմ ջերմ արձագանք դտավ Դիլիջանի աշխատավորութայն մեջ: Քաղաքի հիմնարկ-ձեռնարկություններում

կայացած ժողովներում աշխատավորները միահամուռ կերպով որոշեցին իրենց խնայողութուններից հատկացումներ կատարել հայրենիք վերադարձող հայերի տեղավորմանն օգնելու ֆոնդին:

Տեղաբնակներին տրի կուկեպիվը որոշեց հատկացնել 5 օրվա աշխատավարձ և արագ կերպով ավարտել վերադարձող հայերի համար կառուցվող 10 բնակարանների շինարարութունը:

«Նոր կյանք» փայտամշակման արտելի կուկեպիվը որոշեց հատկացնել 6 օրվա աշխատավարձ և արտասահմանից վերադարձող բնտանիքների համար պլանից դուրս արտագրել սեղաններ, աթոռներ ու մահճակալներ:

**ԲԱՍԱՐԳԵՉԱՐՈՒՄ**

Ապրիլի 5-ին և 6-ին շրջանի հիմնարկ-ձեռնարկութուններում և կոլխոզներում տեղի ունեցան աշխատավորների ժողովներ, որտեղ քննության առնվեց արտաշատցիների դիմումը:

Ջերմորեն պաշտպանելով արտաշատցիների նախաձեռնութունը, շրջկենտրոնի բանվոր-ծառայողները արտասահմանից վերադարձող հայերի տեղավորմանը օգնելու ֆոնդին հատկացրին իրենց 5—6 օրվա աշխատավարձը:

ՄՏ կայանի աշխատողներն այդ նպատակի համար հատկացրին 45 հազար ռուբլի, տորֆագործները՝ 20 հազար ռուբլի, ՄԵԾ Մազրայի կոլխոզնիկները՝ 50 հազար ռուբլի և այլն:

Միայն ապրիլի 5-ին հատկացումների գումարը հասավ 300 հազար ռուբլու: Շրջանի գյուղերում աշխատավորների ժողովները շարունակվում են:

**ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏՈՒՄ**

Ապրիլի 5-ին շրջանի աշխատավորուներ լարված ուշադրությամբ լսեց արտաշատցիների դիմումի հաղորդումը ռադիոյով: Նույն օրը շրջկենտրոնի հիմնարկութուններում և գյուղերում տեղի ունեցան աշխատավորների ժողովներ: Ջերմորեն պաշտպանելով արտաշատցիների նախաձեռնութունը, շրջանի բանվոր-ծառայողներն ու կոլխոզնիկները արտասահմանից վերադարձող հայերի տեղավորմանը օգնելու ֆոնդին

հատկացրին 300 հազար ռուբլի գումար: Շրջանի բանվոր-ծառայողներն իրենց ժողովներում որոշեցին այդ նպատակի համար հատկացնել իրենց 5 օրվա աշխատավարձը:

**ԷԶՄԻԱՏՆՈՒՄ**

Ապրիլի 5-ին շրջկենտրոնի բոլոր հիմնարկ-ձեռնարկութուններում տեղի ունեցան բանվոր-ծառայողների բազմամարդ ժողովներ, որտեղ քննության առնվեց Արտաշատի շրջանի կոլխոզնիկների դիմումը:

Մինչև ժամը 12-ը միայն շրջկենտրոնի բանվոր-ծառայողները այդ նպատակի համար հատկացրին 135 հազար ռուբլի:

Աշխատավորների բազմամարդ ժողովներ տեղի ունեցան նաև շրջանի սովխոզներում ու կոլխոզներում: Միկոյանի անվան սովխոզի բանվոր-ծառայողները հատկացրին 10 հազար ռուբլի, Մոլոտովի անվան սովխոզի բանվոր-ծառայողները՝ 7 հազար ռուբլի:

Շրջանի գյուղերում աշխատավորների ժողովները շարունակվում են:

**ԱՇՏԱՐԱԿՈՒՄ**

Արտաշատցիների դիմումը ջերմ արձագանք գտավ շրջանի աշխատավորության մեջ: Կոլխոզներում և հիմնարկ-ձեռնարկութուններում հրավիրված ժողովներում աշխատավորները ողջունում էին արտաշատցիների խրախուսելի նախաձեռնութունը: Մի քանի ժամվա ընթացքում շրջանի աշխատավորների կողմից կատարվող հատկացումների գումարը հասավ մոտ մեկ միլիոն ռուբլու: Շրջանի գյուղերում հատկացումները շարունակվում են:

**ՍԻՄԻԱՏՆՈՒՄ**

Միսիանի շրջանի կոլխոզնիկները ապրիլի 5-ին իրենց ժողովներում հայրենասիրական ջերմ զգացմունքներով քննության առան արտաշատցիներին դիմումը: Միահամուռ կերպով պաշտպանելով արտաշատցիների նախաձեռնութունը, շրջանի աշխատավորութունը արտասահմանից վերադարձող հայերի տեղավորմանը օգնելու ֆոնդի օգտին հատկացրեց 700 հազար ռուբլի:

Շրջանի գյուղերում արտաշատցիների դիմումի քննությանը նվիրված ժողովները շարունակվում են:

(«Սովետ. Հայաստան» № № 81, 82 83, 84, 85. 1946 թ.)

### ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏ ԵՎԻՐՎԱԾ ԵՐԵՎԱՆԻ Վ. Մ. ՄՈՂՏՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 25-ԱՄՅԱԿԻՆ

Հայ ժողովրդի ներկայացուցիչները, հավաքվելով Երևանի Սպենդիարովի անվան օպերայի և բալետի թատրոնի հույակապ կամարների տակ, շատ նշանակալից իրադարձություններ են նշել: Այդպիսի իրադարձություններից մեկը տեղի ունեցավ երեկ՝ ապրիլի 27-ին: Թատրոնի հսկայական դահլիճը բերկրանքով դիմավորեց ռեսպուբլիկայի լավագույն մարդկանց, որոնք հավաքվել էին ժողովրդի կյանքում տշքի ընկնող տարեթիվը, Հայկական ՍՍՌ կուլտուրայի անմոռանալի տոնը, Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական համալսարան-

բարտուղար ընկ. Բ. Աստվածատրյանը, Հայկական ՍՍՌ Լուսավորության մինիստր ընկ. Գ. Աղբալյանը, Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական համալսարանի ռեկտոր ընկ. Հ. Բունիաթյանը, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ ընկ. Վ. Համբարձումյանը, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամներ ընկ. ընկ. Ա. Տերտերյանը, Հ. Աճառյանը, Գ. Ղափանցյանը, Երևանի Քաղաքային Սովետի գործկոմի նախագահ ընկ. Լ. Հովսեփյանը, Հայաստանի Կ(բ)Պ Կենտկոմի դպրոցական



Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական համալսարանի շենքը

նի 25-ամյակը նշելու համար: Թատրոնի դահլիճը լի էր դիտության ու կուլտուրայի ազանավոր ներկայացուցիչներով, աշխույժ ուսանող երիտասարդությամբ, բազմաթիվ ձեռնարկությունների և հիմնարկությունների աշխատավորներով:

Նախագահության սեղանի մոտ են Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի նախագահ ընկ. Ա. Սարգսյանը, Հայաստանի Կ(բ)Պ Կենտկոմի պրոպագանդայի դժով բարտուղար ընկ. Զ. Գրիգորյանը, Հայաստանի Կ(բ)Պ Երևանի Քաղաքային կոմիտեի

բաժնի վարիչ ընկ. Ա. Խրիմլյանը, պրոֆեսորներ Ա. Տեր-Պողոսյանը, Է. Մելիքսեթ-Քեկը, Ա. Հովհաննիսյանը, Վ. Ռշտունին, Մ. Սանթրոսյանը, Գ. Աղաջանյանը, Ն. Հակոբյանը, Ա. Ղարիբյանը, Բաքվի Պետական համալսարանի դեկանգրիայի դեկավար պրոֆեսոր Մաֆիլին, ուսանողական կազմակերպությունների ներկայացուցիչները և ուրիշները:

Նիստը բացվում է հանդիսավոր իրադրության մեջ, Հայկական ՍՍՌ պետական հիմնի հնչյունների տակ:

Պրոֆեսոր Ռշտունու առաջարկութեամբ նիստին մասնակցողները երկար չլող ծափահարութիւններով ընտրում են պատվավոր նախագահութիւն՝ Համկ(բ)Պ Կենտկոմի Քաղբյուրոյի կազմը մեծ առջնորդ, հանճարեղ գործավոր ընկեր Ստալինի գլխավորութեամբ, ինչպես նաև Հայաստանի Կ(բ)Պ Կենտկոմի քարտուղար ընկ. Գր. Հարութչանյանին:

«Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական համալսարանը 25 տարում» զեկուցումով հանդես եկավ համալսարանի ռեկտոր, Հայկական ՍՍՌ Գիտութիւնների, Ակադեմիայի իսկական անդամ Հ. Բունիաթյանը:

— Երևանի Պետական համալսարանը, — ասում է նա, — հանդիսանում է խոլետական հասարակարգի ծնունդը Հայաստանում: Գիտութիւն ու կուլտուրայի այդ խոշորագույն օջախը ստեղծվել է սովետական իշխանութիւն հաստատվելու հենց առաջին ամիսներին, երբ դաշնակիների տիրապետութեան օրոք քայքայված երկրում արյան հետքերը դեռ չէին չորացել: Իր հիմնադրման ժամանակ համալսարանն ուներ միայն երկու ֆակուլտետ, այժմ դրանց թիվն է 10, որոնցից մեկն է նորերս կազմված՝ միջազգային հարաբերութիւնների ֆակուլտետը: Իր գոյութեան ընթացքում համալսարանը բաց է թողել գիտութեան զանազան ճյուղերի գծով 3.377 մասնագետներ: Համալսարանն ավարտածներից երկուրդ հանդիսանում են Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի իսկական անդամ և չորսը թղթակից-անդամ:

Այժմ համալսարանի առաջ բացվում են նոր լայն գիտական հորիզոններ և բեղմնավոր աշխատանքի հեռանկարներ ի փառս մեր հզոր սոցիալիստական հայրենիքի, — ավարտում է իր զեկուցումը ընկ. Բունիաթյանը:

Նիստին մասնակցողները ջերմ ծափահարութիւններով դիմավորեցին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի նախագահ ընկ. Ա. Սարգսյանին, որը Հայկական ՍՍՌ կառավարութեան և Հայաստանի Կոմունիստական (բոլշևիկների) Պարտիայի Կենտրոնական Կոմիտեի անունից ողջունեց հոբելյար համալսարանին:

Իր ճառում ընկ. Սարգսյանը բնութագրեց 25 տարվա ընթացքում համալսարանի անցած ուղին և նրա կոլեկտիվի առաջ դրեց նոր խնդիրներ, որոնք կապված են ռեսպուբլիկայում ստալինյան շրջորդ հնգամյակի պլանը իրագործելու հետ:

— Պարտիան և կառավարութիւնը մեծ

ուշադրութիւն են նվիրում գիտնականներին, անդու հոգատարութիւն են ցուցաբերում գիտական բազան ընդլայնելու, գիտական կադրերի աշխատանքի պայմանները բարելավելու, նրանց նյութական-կենցաղային մակարդակը բարձրացնելու գործին: Այդպիսի հոգատարութեան օրինակներից մեկը հանդիսանում է ՍՄՄՄ Բարձրագույն կրթութեան Մինիստրութեան ստեղծումը: Կասկած չկա, որ գիտութեան գործիչները, մասնավորապես Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական համալսարանի աշխատողները կգտնվեն այն խնդիրների բարձրութեան վրա, որ չորրորդ հնգամյակում մեր գիտնականների առաջ դնում է մեր Մեծ առաջնորդ ընկեր Ստալինը:

Ցաւտուն ճառ արտասանեց Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի միջկարգի դեկան ընկ. Վ. Համբարձումյանը: Նա հոբելյարին հանձնեց Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի ուղերձը, իսկ լենինգրադի Պետական համալսարանի անունից հաշտութիւն ցանկացավ ի փառս հայրենիքի կատարվող հետագա բեղմնավոր աշխատանքի սալարեզում:

— Մեր համալսարանը, — ասում է իր ելույթում Հայկական ՍՍՌ Կուլտուրութեան մինիստր ընկ. Աղբալյանը, — հանդիսանում է գիտութեան իսկական տաճար, որով պարծենում է ժողովուրդը: Բոլոր հիմքերը կան հույս ունենալու, որ հետագայում ևս համալսարանի կոլեկտիվը հնարավոր ամեն ինչ կանի՝ ամեն կերպ նպաստելու երկրի կուլտուրայի բարգաւաճմանը և ժողովրդական տնտեսութեան զարգացմանը:

Խոսքը տրվում է Բաքվի Պետական համալսարանի դեկանայի դեկան Վարդան Պրոֆեսոր Ռաֆիլին: Բոլոր ներկա եղողների միահամուռ ծափահարութիւնների տակ նա իր շեշտակի, պատկերավոր ճառում հաղորդում է եղբայրական Ադրբեյջանի գիտնականների անունից ջերմ ողջուն Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական համալսարանի պրոֆեսորա-դասախոսական կազմին և ուսանողական կոլեկտիվին ու հանձնում է համալսարանական կոլեկտիվի ներկայացուցիչներին նվերներ:

Նիստին մասնակցողները ջերմորեն են դիմավորում պրոֆեսոր Մելիքսեթ-Բեկին, որը հանդես է գալիս ողջունով Քրիլիսի Ի. Վ. Ստալինի անվան համալսարանի հանձնարարութեամբ:

Այնուհետև ողջունով հանդես են գալիս Երևանի Թշկական ինստիտուտի կողմից պրոֆեսոր Գ. Արեշյանը, Մանկավարժական

ինստիտուտի կողմից պրոֆեսոր Ա. Ղարիրյանը, Պոլիտեխնիկական ինստիտուտի կողմից պրոֆեսոր Խաչչինսկին, Գյուլաթանտեսական ինստիտուտի կողմից պրոֆեսոր Երիցյանը:

Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական համալսարանի հասցեով նրա 25-ամյակի կապակցությամբ ստացված ողջույնի հեռագրերը հրապարակելու համար խոսքը տրվում է պրոֆեսոր Ա. Հովհաննիսյանին: Նա կարողում է ՍՍՌՄ Բարձրագույն կրթության մինիստր ընկ. Կաֆտանովի, ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ ընկ. Վավիլովի, Մոսկվայի Լոմոնոսովի անվան կենտրոնի շքանշանակիր Պետական համալսարանի, Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի, Լենինգրադի էրմիտաժի, Ակադեմիկոսներ Հ. Օրբելիի, Տարլեի, ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ Խ. Կոշտոյանցի հեռագրերը և հայտնում է, որ ստացված են նաև շատ այլ ողջույններ Սովետական Միության զանազան քաղաքներից, գիտական կազմակերպություններից և առանձին ականավոր գիտնականներից:


Հանդիսավոր նիստին մասնակցողները բուն ծափահարություններով են դիմավորում աշխատավորների մեծ առաջնորդ, սովետական ժողովրդի հաղթանակների կազմակերպիչ և ոգեշնչող ընկեր Ստալինին ողջույն ուղարկելու անաչարակությունը: Ողջույնի տեքստը հաստատվում է ամբողջ դահլիճի երկարատև, միահամուռ ծափահարություններով:

Այնուհետև ներկա եղողների ջերմ ծափահարությունների տակ հրապարակվում է մեծ Ստալինի մերձավորագույն զինակից ընկ. Մոլոտովին ուղղված ողջույնի տեքստը, որի փառապանծ անունը կրում է հորելյար համալսարանը:

Ժողովը նաև ողջույնի հեռագիր է ընդունում՝ ուղղված ՍՍՌՄ Բարձրագույն կրթության մինիստր ընկ. Կաֆտանովին:

Հանդիսավոր նիստը փակվում է Հայկական ՍՍՌ պետական հիմնի հնչյունների տակ:

Նիստից հետո տեղի ունեցավ մեծ համերգ մայրաքաղաքի արտիստական լավագույն ուժերի մասնակցությամբ:

 (229)

Լ Ե Զ Վ Ի Ի Ն Ս Տ Ի Տ Ո Ի Տ Ո Ի Ս

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Մատի անվան Լեզվի ինստիտուտում օրերս տեղի ունեցավ ինստիտուտի գիտական խորհրդի նիստը: Խորհրդում լրսվեց ինստիտուտի գիտակտոր պրոֆ.-դոկտոր Ա. Ղարիրյանի զեկուցումը «Լեզվի ինստիտուտի գիտական պրոբլեմները շորրորդ հնգամյակում» թեմայի մասին:

Գիտական խորհուրդը մշակեց ինստիտուտի գիտական պրոբլեմների հնգամյա պլանի նախագիծը: Համաձայն այդ նախագծի, ինստիտուտի առանձին սեկտորները կատարելու են մի շարք գիտական ուսումնասիրություններ. այսպես օրինակ՝ հայոց լեզվի պատմության սեկտորը պատրաստելու և հրատարակելու է միջին հայերենը և նրա պատմությունը, մոտ քառասուն մամուլ ծավալով աշխատություն, որի նյութերի հավաքումը սկսվելու է այս տարվանից: Գրվելու է հայ-վրացական լեզվական ընդհանրացումներ ուսումնասիրությունը:

Նույն սեկտորի դժով հնգամյակում կատարվելու է գրաբարի լեզվական դպրոցների, Ուրարտական բեկոագիր արձանագրությունների ուսումնասիրությունը և հրատարակումը: Առաջիկայում շարունակվելու է հայ բարբառների ուսումնասիրությունը, այս տարի կատարվելու է Վանի, Ակնի, Սեբաստիայի, Արաբկիրի, Մալաթիայի, Սուշավայի բարբառների ուսումնասիրությունը: Կազմվելու է հայ բարբառների բարբառը:

Ստալինյան շորրորդ հնգամյակի ընթացքում մեծ աշխատանք է կատարվելու ինստիտուտում բառարանագիտական սեկտորի գծով: Կազմվելու են երկլեզվյան բառարաններ՝ հայ-ուսերեն, ուս-հայերեն, յուրաքանչյուրը շորս հատորյակով: Կազմվելու է գրաբարից-ուսերեն բառարան, հատկապես հին հայերենի ուսումնասիրության համար, այն հաշվով, որպեսզի Սովետական Միության եղբայրական ժողովրդների այն գիտնականները, որոնք զբաղվում են հայոց հին գրականության և պատմության հարցերով, օգտվեն բնագրից և ոչ թե ընդտողյա թարգմանություններից: Նույն սեկտորի դժով կազմվելու է նաև վրացերեն-հայերեն, անգլերեն-հայերեն և այլ բառարաններ:

Ստալինյան շորրորդ հնգամյակի ընթացքում մեծ աշխատանք է կատարվելու ինստիտուտում բառարանագիտական սեկտորի գծով: Կազմվելու են երկլեզվյան բառարաններ՝ հայ-ուսերեն, ուս-հայերեն, յուրաքանչյուրը շորս հատորյակով: Կազմվելու է գրաբարից-ուսերեն բառարան, հատկապես հին հայերենի ուսումնասիրության համար, այն հաշվով, որպեսզի Սովետական Միության եղբայրական ժողովրդների այն գիտնականները, որոնք զբաղվում են հայոց հին գրականության և պատմության հարցերով, օգտվեն բնագրից և ոչ թե ընդտողյա թարգմանություններից: Նույն սեկտորի դժով կազմվելու է նաև վրացերեն-հայերեն, անգլերեն-հայերեն և այլ բառարաններ:

Այս հնգամյակում նախատեսվում է կազմել արդի հայերեն լեզվի: դպրոցական բառարան, արդի հայերենի բացատրական և հայ բարբառների մեծ բառարան:

Լեզվի ինստիտուտի ժամանակակից հայերենի սեկտորի գծով նախատեսվում է շարունակել արդի հայերենի ուսումնասիրության աշխատանքները: Ուսումնասիրվելու է Հով. Հովհաննիսյանի, Հով. Թումանյանի, Վ. Տերչանի, Բաֆֆու, Նար-Դոսի և սովետահայ շրջանի գրողներից՝ Դ. Գեմիրճյանի, Ստ. Զորյանի, Ն. Զարյանի գեղարվեստական ստեղծագործությունների լեզուն:

Այս սեկտորի գծով կազմվելու է հայոց

լեզվի ընդարձակ քերականությունը, կատարվելու է Ե. Սկրյոգերի քերականության հայերեն թարգմանությունը:

Նախատեսվում է հրատարակել ակադեմիկոս Մառի ընտիր երկերի երկհատորյակը, Անիլին վերաբերող նյութերի ժողովածուն, Մառի հայ մատենագրության պատմությունը:

(«Սովետական Հայաստան» № 116, 1946 թ.)

### Գ Ի Տ Ա Կ Ա Ն Ն Ո Ր Ա Շ Խ Ա Տ Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ն Ե Ր

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Տնտեսագիտական սեկտորն այս տարի գիտա-հետազոտական լայն աշխատանք է ծավալում: Սեկտորը գլխավորապես ըզբաղվում է Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության պլանավորման, արտադրական ուժերի տեղաբաշխման, ժողովրդական տնտեսության պատմության և հայ տնտեսական մտքի զարգացման խնդիրներով:

Հայկական ՍՍՌ տնտեսության պլանավորման ուղղությամբ սեկտորի գիտա-հետազոտական աշխատանքների հիմնական նպատակն է ուսումնասիրել «Սևան—Ջանդու—Արաքս» էներգետիկ իրրիզացիոն խոշորագույն պրոբլեմը:

Ռեսպուբլիկայի արտադրական ուժերի տեղաբաշխման ուղղությամբ ուսումնասիրվում են ռեսպուբլիկայի և նրա առանձին շրջանների ֆիզիկական և տնտեսական աշխարհագրական կարևոր խնդիրները, ինչպես նաև տնտեսությունը՝ կապված արդյունաբերական և գյուղատնտեսական շրջանների և տրանսպորտային հանգույցների հետ:

Սեկտորը նախատեսել է պատրաստել 13 կարևոր աշխատություններ, որոնց թվում Հայկական ՍՍՌ տնտեսական և ֆիզիկական աշխարհագրության դասագրքերը և այլն: Այդ աշխատանքներին մասնակցում են ոչ միայն սեկտորի ամբողջ գիտական կոլեկտիվը, այլ և Հայկական ՍՍՌ Գիտություն-

ների Ակադեմիայի գիտա-հետազոտական ինստիտուտները:

Ժողովրդական տնտեսության պատմության գծով այս տարվա առաջին կիսամյակում սեկտորն ավարտելու է «Հայկական ՍՍՌ արդյունաբերության զարգացման պատմությունը», «Հայկական ՍՍՌ գյուղատնտեսության զարգացման պատմությունը» և «Ռեսպուբլիկայի կոլտոգները Հայրենական պատերազմի նախօրյակին» աշխատությունները և այնուհետև սկսելու է երկու նոր խոշոր աշխատություն՝ «Կապիտալիզմի զարգացման պատմությունը Հայաստանում» և «Հայկական ՍՍՌ կոլեկտիվացման պատմությունը»:

Հայ տնտեսական մտքի զարգացման պատմության ուղղությամբ սեկտորը ձեռնարկել է «Հայ տնտեսական միտքը 19-րդ դարի 2-րդ կեսին» աշխատանքը:

Տնտեսական սեկտորի գիտա-հետազոտական այս աշխատանքներին մասնակցում են Եզալի թվով գիտական աշխատողներ, որոնց թվում պրոֆեսորներ՝ Գ. Քոչարյանը, Ս. Լիսիցյանը, Զ. Թումանյանը, գիտությունների թեկնածուներ և ավագ գիտական աշխատողներ Ս. Խրիմլյանը, Գ. Ալավերդյանը, Ա. Գարամյանը, Ս. Զորաբյանը, Մ. Շահբազյանը, Ստեփանյանը և ուրիշներ:

(«Սովետական Հայաստան» № 80, 1946 թ.)

### ԵՂԻՇԵԻ „ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ“

Պրոֆեսոր — դոկտոր Ե. Տեր—Մինասյանը պատրաստում է 5-րդ դարի հայ նշանավոր պատմիչ Եղիշեի «Վարդանանց պատմության» գիտական համեմատական բնագիրը: Այս նպատակով Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետական Զեռադատանը (Մատենադարան) եղած մոտ 20

### ԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԲՆԱԳԻՐԸ

ձեռագրերը մանրամասն կերպով համեմատվում են, որոնց մեջ պահպանված են Եղիշեի «Վարդանանց պատմության» բնագրերը: Բացի դրանից՝ այդ ձեռագրերում կան բազմաթիվ ձեռագիր ժողովածուներ, որոնց մեջ կան որոշ գլուխներ Եղիշեի պատմությունից:

Այս աշխատությունն ունի այն արժեքը, որ բնագրում եղած որոշ աղճատված տեղեր ու հատվածներ, նույնպես և սխալ բաներ կճշտվեն և մեր բանասիրական գիտությունը կունենա նղիշեի պատմության համեմատաբար անաղարտ բնագիր:

Այժմ հրատարակի վրա եղած հայ պատմիչներ՝ Մ. Խորենացու, Ղ. Փարպեցու, Սե-

բեոսի, Հովհան Մամիկոնյանի, Ասողիկի «Հայոց պատմություն» գրքերի գիտական համեմատական բնագրերին Ե. Տեր—Մինասյանի այս աշխատությամբ ավելանում է նղիշեի «Վարդանանց պատմության» գիտական համեմատական բնագիրը:

(«Սովետ. Հայաստան» № 81, 1946 թ.)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒՅՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ**

Հայաստանի Սովետական Գրողների Միության նախագահությունը որոշում ընդունեց այժ սեպտեմբերին հրավիրել Հայաստանի Սովետական Գրողների Միության երկրորդ համագումարը: Համագումարում կլսվեն զեկուցումներ հետևյալ թեմաներով՝ Սովետահայ գրականությունը և նրա հետագա զարգացման խնդիրները, Հայ գրականությունը Հայրենական մեծ պատերազմի ժամանակաշրջանում, Սովետահայ գեղարվեստական արձակի զարգացման ուղիները և նրա հեռանկարները, Սովետահայ պոեզիան, Սովետահայ դրամատուրգիայի զարգացման պրոբլեմները, մանկա-պատանեկական գրականության հարցերը, գրական

բնագրության վիճակն ու խնդիրները: Համագումարում դրվում է նաև զեկուցում ժամանակակից արտասահմանյան հայ գրականության մասին:

Հայաստանի Սովետական Գրողների Միության նախագահությունը որոշեց համագումարին մասնակցելու համար հրավիրել արտասահմանյան հայ գրականության ականավոր ներկայացուցիչներին:

Համագումարին որպես հյուրեր մասնակցելու համար կհրավիրվեն նաև Մոսկվայի, Լենինգրադի, Ուկրաինայի, Վրաստանի, Ադրբեջանի և եղբայրական մյուս սոցիալիստականների մի շարք խոշոր գրողներ:

(ՀՀԳ)

**ԵՐԵՎՈ ՆՎԻՐՎԱԾ ԿՈՄԻՏԱՍԻ ՀԻՇՏԱԿԻՆ**

Ապրիլի 26-ին Հայաստանի Սովետական կերպարվեստագետների տան դահլիճում տեղի ունեցավ հուշերի երեկո, նվիրված Կոմիտասին:

Նրևկոյին մասնակցում էին գեղանկարիչները, գրաֆիկները, քանդակագործները, որոնք եռանդուն կերպով պատրաստվում են մասնակցելու Կոմիտասի ծննդյան 75-ամյակի առթիվ հայտարարված Կոմիտասի լավագույն պորտրետի մրցանակաբաշխությանը:

Մեծանուն կոմպոզիտոր—երաժշտագետի մասին հետաքրքիր հուշեր պատմեց Կոմիտասի կյանքին ծանոթ դաշնակահարուհի Աղավնի Մեսրոբյանը: Նա բերեց մի շարք կարևոր փաստեր, օրինակներ այն մասին, թե ինչպես էր աշխատում Կոմիտասը, ինչպիսի ովերթություններ էր հավաքում ժողովրդական երգերը, և թե որքան շատ էր կապված նա ժողովրդի հետ:

(«Սովետական Հայաստան» № 101, 1946 թ.)

**„ Ի Մ Հ Ո Ւ Շ Ե Ր Ի Ց “**

Հայպետհրատի հրատարակությամբ լույս տեսավ մեծանուն բանաստեղծ Ավ. Իսահակյանի «Իմ հուշերից» վերնագրով աշխատությունը: Այս աշխատության մեջ բանաստեղծը հետաքրքիր հուշեր է պատմում

Հովհ. Թումանյանի, Հովհ. Հովհաննիսյանի, Նար—Դոսի, Պերճ Պոռոջյանի և հայ գրականության ու արվեստի մյուս ականավոր գործիչների կյանքի մասին:

**Լ Ե ՈՒ „ Հ Ա Յ Ո Ց Պ Ա Տ Մ ՈՒ Թ Յ ՈՒ Ն “ - Ը**

ՀՍՍՄ Գիտությունների Ակադեմիայի հրատարակչությունը լույս

պատմագրության ականավոր ներկայացուցիչներից մեկի՝ Լեոկ «Հայոց պատմություն»

ընծայեց հայ

երրորդ հատորը, բաղկացած 1119 էջից: Այս հատորն ընդգրկում է հայ ժողովրդի բա-


ղաբական, սոցիալ-տնտեսական և կուլտուրական կյանքը 16—18 դարերում:

### ՀՈՎՀԱՆՆԱՎԱՆՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

Քասախ գետի անդնդախոր կիրճի գեղադիր ձորափին կանգնած է միջնադարյան վանքերից Հովհաննավանքը, որը կարծես լրացնում է շրջապատի բնության գեղեցկությունը: Դա տարբեր ժամանակներում կառուցված, բայց մի ընդհանուր ներդաշնակություն ներկայացնող ճարտարապետական հուշարձանների խումբ է: Միանեֆային բազիլիկայի տիպի հուշարձաններից մեկն ունի հնուության ակնհայտ նշաններ. նրա պայտաձև կամարները և մի շարք դետալներ անկասկած վկայում են այն մասին, որ նա

1918 թվին, մի փոթորկոտ անձրևային գիշեր փլվել է այդ սքանչելի շինության գմբեթը: Ներկայումս դրանք ավերակներ են, բայց այդ ավերակներն էլ վկայում են շենքի ունեցած գեղեցկության և մոնումենտալության մասին:

Հովհաննավանքի հուշարձանների խմբի մեջ ամենահետաքրքիրը ժամատունն է, որը իր օրիգինալությամբ զանազանվում է հայկական այդ տիպի կառուցումներից: Կառուցված է 1250 թվին վաչի որդի Բուրդի իշխանի կողմից:



Հովհաննավանք. արևմտյան ժամատունը (ԺԳ դար) նորոգելուց առաջ

կառուցվել է V դարուց ոչ ուշ, բայց նրա տարբեր մասերը հաճախակի վերանորոգվել են:

Բազիլիկայի կողքին երբեմն կանգնած է եղել վաչի իշխանի 1217 թվին կառուցած տաճարի մոնումենտալ շենքը: Սա համեմատաբար փոքր տաճար է, հետաքրքիր, սքանչելի քանդակակիր դետալներով. բոլոր շորս անկյուններում ունի երկհարկանի խորաններ. դեպի երկրորդ հարկում տեղավորված խորանները տանող միանգամայն օրիգինալ սանդուղքները հանդիսանում են հնագույն հայ ճարտարապետների կառուցողական արվեստի փայլուն նմուշ:

Պատմական Հուշարձանների պահպանության Կոմիտեն, ղեռ մինչ հայրենական պատերազմը, Հովհաննավանքում կատարել էր վերականգնման նշանակալից աշխատանքներ: Ամրացված են ժամատան սյուների հիմքերը, վերականգնված է արևմտյան պատի մի մասը, տանիքն ամբողջապես ծածկված է կղմինդրով, գլխավոր տաճարի արևելյան պատի մի մասը ամրացված է:

Ներկայումս Պատմական Հուշարձանների Պահպանության Կոմիտեն կատարում է գլխավոր տաճարի և բազիլիկայի արևելյան պատերի ամրացումն ու վերականգնումը: